ՀՈՒՇՈՒՄՆԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ

Դպրոցական գործունեության վերականգնումը հնարավորություն է ընձեռում երեխաներին ավելի արագ հաղթահարել տրավմատիկ իրողության հետևանքները, վերադառնալ առօրյա:

Յուրաքանչյուր երեխա անհատականություն է և յուրովի է արձագանքում տարբեր իրավիճակներին: Չկան իրար նման արձագանքող երկու երեխաներ:

Սահմանել դասերի կարճատև պլան, տալ մինիմալ տնային հանձնարարություններ, թեթեվացնել երեխայի ծանրաբեռնվածությունը, ճկուն դարձնել ամենօրյա գրաֆիկը:

Տրավմա ապրած երեխաների հետ անհրաժեշտ է կիրառել ուսուցանման այնպիսի մեթոդներ, որոնք ուղղված են կենտրոնացմանը, կառուցվածքայնությանը: Կարելի է ընդգծել նյութի կարևոր կետերը, պարբերությունները, մասնատել ծավալուն նյութը և այլն:

Հետևողական լինել երեխաների դրսևորումներին, չանտեսել ոչ ֆիզիկական անհարմարությունը, ցավերի առկայությունը, ոչ հոգեբանական դժվարությունները, որ կարող են երեխաների մոտ արտահայտվել ուսումնական գործունեության ընթացքում:

Այս նյութը ստեղծվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները: